

## Կ Ա Ր Ծ Ի Ք

### **Վալտեր Տիգրանի Բերբերյանի «Հայ ոճագիտական մտքի զարգացման հիմնախնդիրները» թեկնածուական ատենախոսության մասին**

Լեզվագիտական համակարգում ոճագիտությունը միշտ ունեցել է իր ուրույն տեղն ու նշանակությունը. այս ոլորտում բազմաթիվ լուրջ ու արժեքավոր հետազոտություններ են կատարել ինչպես անտիկ աշխարհի մտածողները, այնպես էլ մերօրյա հայ և համաշխարհային գիտնականները: Արդյունքում հսկայածավալ նյութ է նախապատրաստվել համեմատական ոճագիտական ուսումնասիրությունների համար, սակայն հայերենի լեզվաբանության շրջանակներում իրականացված ոճագիտական ուսումնասիրությունները՝ համեմատած բանասիրական մյուս բնագավառների հետ, ավելի քիչ ու միակողմանի է դիտարկված: Ատենախոսության հեղինակը իր առջև խնդիր է դրել.

1. ուսումնասիրել հայոց լեզվի ոճական համակարգի մասին 1950–ական թթ. մինչև մեր օրերը գրված աշխատանքները,
2. քննական հայացքով վերլուծել այդ աշխատանքները,
3. բացահայտել հայ ոճագիտական մտքի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները» ՔԱտ. էջ 3:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 5 գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Վ. Բերբերյանը ներածության մեջ համառոտակի ներկայացրել է ոճագիտության բնագավառում հրապարակի վրա եղած հայ և օտարազգի գիտնականների ձեռքբերումները, այնուհետև հայ ոճագիտության զարգացման հիմնախնդիրները ներկայացրել է 70 տարվա շրջանակներում՝ առանձնացնելով հետևյալ շրջափուլերը.

«Ա. Հայ ոճագիտական միտքը 1950-60-ական թթ.,

Բ. Հայ ոճագիտական միտքը 1970-90-ական թթ.,

Գ. Հայ ոճագիտական միտքը 2000-2020-ական թթ.» ՔԱտ. էջ 8-10 :

Սակայն հեղինակը ատենախոսությունը հիշյալ շրջափուլերով չի ներկայացրել՝ հետևյալ մեկնաբանությամբ. «Այս շրջանաբաժանումը խիստ պայմանական է, քանի որ դժվար է հստակ սահմաններ գծել նշված փուլերի միջև ժամանակային առումով: Դա նաև համոզիչ չէր լինի զուտ գիտական տեսանկյունից: Այդ իսկ պատճառով մենք նախընտրելի համարեցինք ոճագիտական մտքի զարգացման ընթացքը ներկայացնել ըստ լեզվի կառուցվածքային մակարդակների և ոճագիտական կարգերի: Հակառակ դեպքում նաև ստիպված պիտի լինեինք պարբերաբար՝ ըստ տարբեր շրջափուլերի, անդրադառնալու լեզվի տարբեր մակարդակներին վերաբերող ոճագիտական աշխատանքներին: Այդ իսկ պատճառով մեր աշխատանքի համար ընտրել ենք այս կառուցվածքը» №Ատ. էջ 11<sup>ա</sup>: Ուստի ատենախոսությունը ներկայացրել է ըստ լեզվական մակարդակների՝ հնչյունային, բառային, քերականական, այնուհետև անդրադարձել է ոճերի տեսակներին և լեզվի պատկերավորման-արտահայտչական համակարգին: Սակայն քանի որ ոճաբանական ուսումնասիրությունների օբյեկտը համընկնում է լեզվաբանական մյուս գիտակարգերի հետաքրքրությունների շրջանակներում գտնվող լեզվական երևույթների՝ հնչյունի, բառի, նախադասության, տեքստի հետ, ուստի հայտնի է, որ հետազոտության միևնույն օբյեկտին կարող են անդրադառնալ միմյանցից սկզբունքորեն տարբերվող գիտություններ, որոնցից յուրաքանչյուրը միևնույն երևույթը կարող է ուսումնասիրել իր սեփական հասկացական ապարատի օգնությամբ, իր հետազոտությունների ու խնդիրների շրջանակներում: Իսկ այն, որ ոճաբանությունն ու լեզվաբանական մյուս գիտաճյուղերը, ունենալով ուսումնասիրության նույն օբյեկտը, միմյանցից էականորեն տարբերվում են իրենց հետազոտության առարկաներով ու խնդիրներով, մեթոդներով ու հասկացություններով, այսօր արդեն անվիճելի իրողություն է:

Բերբերյանը ուսումնասիրությունը կատարել է, իր լեզվով ասած, «համակցելով» նկարագրական, վերլուծական, համեմատական մեթոդները:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է հնչյունային ոճագիտությանը: Հայտնի է, որ հնչյուններն ինքնին վերցրած որևէ իմաստ չունեն, սակայն թե՛ հայերենում, թե՛ այլ լեզուներում կան հնչյունային մակարդակում ձայնային հոսքի կարգավորման որոշ հնարներ, որոնցով զգալի արտահայտչականություն է

հաղորդվում խոսքին: Ոճագիտության մեջ այդ հնարները բաժանվում են երկու խմբի՝ հնչյունային գործիքավորման հնարներ և հանգավորում: Հնչյունային գործիքավորման հիմնական հնարներն են բաղաձայնայթը, առձայնայթը և նմանաձայնայթունը: Հեղինակն այս գլխում նախ ներկայացրել է այն հեղինակների կարծիքները, որոնք զբաղվել են հնչյունային ոճաբանությամբ չՄ. Ասատրյան, Ս. Աբրահամյան, Պ. Պողոսյան, Լ. Եզեկյան, Ֆ. Խլղաթյան<sup>ա</sup>, այնուհետև քննել է վերը հիշատակված հնարները: Այս բաժնում անդրադարձել է նաև հնչերանգի, դադարի, շեշտի և հանգի վերաբերյալ օտարազգի և հայ գիտնականների կարծիքներին:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է բառային ոճագիտությանը: Քննությունը սկսում է Ս. Մելքոնյանի, Ս. Էլոյանի բառապաշարի ոճաբանական դասակարգումներից, որոնք կարևոր ներդրումներ է համարում այս ասպարեզում: Առանձնացնում է Ս. Էլոյանի բառապաշարի ոճաբանական դասակարգման երեք սկզբունքները՝ գործառական, իմաստային, հուզարտահայտչական: Այնուհետև քննում է Ս. Էլոյանի դասակարգումն՝ ըստ հուզարտահայտչական և ըստ գործառական ոճական երանգավորման խմբերի, և առավելությունը տալիս վերջինիս. «Մենք կարծում ենք, որ Ս. Մելքոնյանի դասակարգումը առավել համոզիչ է, քանի որ հնարավորություն է տալիս ուսումնասիրողին համակողմանիորեն բնութագրել երևույթը» չԱտ. էջ 38<sup>ա</sup>:

Բառապաշարի ձևաիմաստային խմբերի ոճագիտական վերլուծությունը ներկայացրել է ըստ լեզվաբաններ Գ. Վահանյանի, Գ. Ջահուկյանի և Ֆ. Խլղաթյանի, Հ. Հարությունյանի, Էդ. Աղայանի, Ս. Մելքոնյանի, Ս. Էլոյանի, Հ. Պետրոսյանի, Պ. Պողոսյանի, Ա. Մարությանի, Լ. Եզեկյանի, Թ. Շահվերդյանի, Յու. Ավետիսյանի: Այս հեղինակների գիտական աղբյուրների քննությունից եկել է այն համոզման, որ գերազանցապես ուշադրության են արժանացել հոմանիշների և հականիշների ոճական կիրառությունները: «Հետագա ուսումնասիրություններում բնութագրվում է նաև համանունների և հարանունների ոճական նշանակությունը» չՍղմ. էջ 7<sup>ա</sup>:

Հետաքրքրական են դարձվածային ոճաբանության վերաբերյալ դիտարկումները: Հեղինակը առանձնակի քննությամբ արժևորում է Խ. Բաղիկյանի «Դարձվածային ոճաբանությունը»: Այս բաժնում կարևոր ենք համարում նաև հեղինակի կարծիքը դարձվածքների թարգմանության վերաբերյալ. «Թարգմանող լեզվի համակարգում

համարժեք միավորի չիմացությունը կարող է երևան բերել բազմաթիվ աղավաղումներ, աղճատումներ, այդ թվում՝ ոճական: Ուստի մերօրյա հետազոտողներին առաջարկում ենք դիտարկել համատեքստը» ՔԱտ., էջ 53»:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է քերականական ոճագիտությանը: Տարբերակված են ձևաբանական ոճագիտությունն ու շարահյուսական ոճագիտությունը, որոնցից յուրաքանչյուրն ունի արտահայտչական-պատկերավորման իր յուրահատուկ համակարգը: «Քերականական պատկերավորման հիմքում ընկած է լեզվաոճական մի երևույթ, որը միայն վերջերս է սկսել հանգամանորեն ուսումնասիրվել՝ ստանալով՝ «վերախմաստավորում» կամ «քերականական փոխաբերություն» անվանումը: Հայերենին, ինչպես և ամեն մի զարգացած լեզվի, բնորոշ է բազմազան հոմանիշ քերականական կառույցների առկայությունն ու դիպուկ կիրառությունը: Ինչպես բառային մակարդակում միմյանց փոխարեն կարող են հանդես գալ բառային հոմանիշները, այնպես էլ ձևաբանական և շարահյուսական մակարդակներում կիրառվում են իմաստով մոտ Քհոմանիշ», սակայն տարբեր արտահայտչական ունակություններով օժտված զուգահեռ քերականական կաղապարներ, որոնք ավելի ճոխ ու պատկերավոր տեսք են տալիս հայոց լեզվին» ՔԹ.Շ. Ոճագիտություն, էջ 138-139»:

«Ձևաբանական մակարդակում Վ. Բերբերյանը արժևորում է հատկապես Ռ. Մկրտչյանի աշխատությունը. «Կարծում ենք, որ Ռ. Մկրտչյանի գիրքը հայ լեզվաբանության մեջ ժամանակակից հայերենի ձևաբանական ոճագիտության վերաբերյալ ամենից հաջող գիտական ուսումնասիրությունն է» ՔՄղմ. էջ 9-10»: Ինչ մնում է շարահյուսական ոճաբանությանը, ապա հեղինակը թեև ուսումնասիրել է այս թեմային վերաբերող գրականությունը, գնահատել, արժևորել, սակայն, գտնում է, որ հայերենի շարահյուսական ոճագիտության մասին ամբողջական ուսումնասիրություն չունենք, թեև մենք կարծում ենք, որ մեր նորօրյա ուսումնասիրությունների մեջ բավականին առաջընթաց կա նաև այդ բնագավառում:

Ատենախոսության չորրորդ գլուխը նվիրված է ոճի տեսակներին ու նրանց դասակարգմանը: «Տարբեր հեղինակներ տարբեր մոտեցումներ են ցուցաբերում գործառական ոճերի էության և առանձնահատկությունների ըմբռնման հարցում, ընդ որում՝ այստեղ նկատվում են երկու ծայրահեղություններ. Ոմանք անհարկի

շատացնում են գործառական ոճերի քանակը, մյուսներն, ընդհակառակը, խիստ սակավ չափով են ներկայացնում դրանք» № Թ.Շ. Ոճագիտություն, էջ 21: Հեղինակն իր ատենախոսության մեջ կանգ է առել պաշտոնական, գիտական, գեղարվեստական, առօրյա-խոսակցական, լրագրային հրատարակախոսական գործառական ոճերի և իրադրական անհատական ոճերի քննության վրա:

Հինգերերդ գլուխը նվիրված է լեզվի պատկերավորման Ֆակտիք, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում-արտահայտչական Ֆճարտասանական դարձույթներ, կրկնություն, հակադրություն, աստիճանավորում համակարգերին:

Վերջում հանդես է եկել եզրակացություններով:

Ներկայացված ատենախոսությունը փաստում է, որ Վ. Բերբերյանը քաջատեղյակ է հայ ոճագիտությանը նվիրված վերջին 70 տարիների ընթացքում հրատարակված գիտական գրականությանը: Կատարել է համարձակ եզրահանգումներ, արել չափավոր դիտողություններ: Աշխատանքը շարադրել է գրագիտորեն: Դրականորեն արժևորելով աշխատանքը՝ այնուամենայնիվ ունենք մի քանի դիտողություններ:

1. Շարադրանքից երևում է, որ Վ. Բերբերյանը գերազանցապես անդրադարձել է արդի հայերենի ոճագիտության վերաբերյալ հրատարակված գրականությանը, այնինչ կարևոր ուսումնասիրություններ կան նաև մեր լեզվի նախորդ շրջանների մասին, այսպես՝ Վարազ Առաքելյանի «Հինգերերդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը», «Ակնարկներ հայ գրական լեզվի պատմության №5-րդ դար», «Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը», «Խորենացու լեզուն և ոճը», Գևորգ Բաղդիշյանի «Սեբեոսի լեզուն և ոճը», Վազգեն Համբարձումյանի «Հովհաննես Մամիկոնյանի «Տարոնի պատմության լեզուն և ոճը»: Թեև ուսումնասիրել է իմ №Թ.Շ.Բ «Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանությունը» և ըստ անհրաժեշտության՝ հղումներ կատարել:


2. Հայտնի է, որ ոճագիտության մեջ լեզվաարտահայտչական միջոցների դասակարգումը համապատասխանում է լեզվական միավորների կառուցվածքային դասակարգման սկզբունքներին՝ հնչյունային, բառային, ձևաբանական, շարահյուսական, սակայն շատերը համեմատությունը դիտարկում են բառային



5. Լավ կլիներ, որ աշխատանքում երևար հեղինակի կարծիքը վերջերս շրջանառված քերականական վերաիմաստավորումներին և տեքստի ոճաբանությանը նվիրված ուսումնասիրություններին:

Այսպիսով՝ պաշտպանության ներկայացված ատենախոսությունը կարևոր ուսումնասիրություն է վերջին 70 տարիների հայ ոճագիտության մտքի զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ: Մեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը: Հրատարակված գիտական հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդին՝ Վալտեր Տիգրանի Բերբերյանին շնորհելու Ժ. 02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի՝ իր հայցած գիտական աստիճանը, որին նա արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս  Թ.Ս. Շահվերդյան  
բ.գ.դ., պրոֆեսոր

Բ.գ.դ., պրոֆեսոր Թ.Ս. Շահվերդյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՎՊՀ գիտքարտուղար  Ս. Բեժանյան, մ.գ.թ., դոցենտ

15.01.2023 թ.

